

րէցն և զծնողն իւր զՊօղոս քհնյն. և զկողակիցն իւր զՄինէն և զորդիքն իւր զՄուշեղն, և զՈւմէտն և զմեղապարտ լոկ անուամբ զտէր Պետրոս և զգաստերքն իւր զԹանկիկն, զՍանդուխտըն, զԻշխան...»։ (Խապ. Յոյց. տետր. 13, էջ 1292)։

ՊԵՏՐՈՍ ԿԹՂ. ՍՍՈՅ, ԿԱՐԿԱՌԵՅԻ.— Եփրատ գետի մօտ Ս. Տիմոթէոս վանքին քառասուն տարի միաբանութիւն ըրած է։ Յիշատակագիր մը 1330 թուական Մաշտոցի մէջ հետեւեալ կերպով կը յիշատակէ Կարկառեցիին Ս. Յակոբի վանքին կատարած ուխտաւորութիւնը նախ քան զկաթողիկոսութիւնն. «Աստուածատուր ծառայ Փրկչին և բարեխօսութեամբ Ս. Կուսին, թվին ՌԼԸ (=1589) ամին. Կարկառու Պետրոս վրդ.ն եկաւ երկրպագութիւն ս. Գերեզմանին առաջնորդութեան տէր Դաւիթ արքեպիսկոպոսին և կացաք ամ մի Երուսաղէմ սուրբ քաղաքիս, ժէ աւր Ս. Յարութեան մէջ կեցաք»։ (Խապ. Յոյց. տետր. Ա. էջ 104)։ Ս. Յակոբի վանքին պարտուց վճարման աշխատողներէն մին էր, Սսոյ Ազարիա կթղ.ին օրով. նոյն նըպատակին համար իր աշակերտներով նուիրակութեան ելած է Կարնոյ և Երզնկայի կողմերը, հաւաքուած դրամները կը ղըրկուէին Ազարիա կթղ.ին, որ Այնթապցի Յովհաննէս վրդ.ին ձեռքովը կը հասցնէր Ս. Յակոբի վանքը, անոր դրանները ազատելու համար։ Կարկառեցիին յետոյ կ'ընտրուի կթղ. Սսոյ և կը նստի Հալէպի մէջ, ժամանակակից մը հետեւեալը կը գրէ այս մասին. «Եւ Հալէպցիք հակառակ Յովհաննէսին (Այնթապցիին) հարկ եղին ի վերայ Պետրոսին և ստիպէին զնա լինել կաթողիկոս յանուն սուրբ յԵրուսաղէմայ. զի դու աւագ մեծ վարդապետ ես ի մէջ ամենայն հայոց և բազում աշակերտից հայր և Հալապա մերձ յԵրուսաղէմայ և ամենայն հայոց դուռն է։ Այսպէս և այնպէս ասելով հագիւ ի յոչ կամայ ի հաւանութիւն ածին և օրհնեցին և նստուցին ի Հալէպ.» (Դարանաղցի. էջ 321—331. նաև 351—352)։ Կարկառեցիին եօթը տարի կը նստի Հալէպի մէջ (1602—1608), ուր 1608ին կը վախճանի և կը թաղուի Ս. Քառասուն Մանկանց եկեղեցիին բակը. (տե՛ս իր տապանագիրը. Սիօն. 1868, էջ 214. Ա. Մանուղ. 1908, էջ 592)։

ՊԵՏՐՈՍ ԿԹՂ. ՍՍՈՅ, ՀԱԼԷՊՅԻ (Պիժակ).— Առ. Կարկառի 1700ին. հակաթոռ կթղ. (1708—1712). 1710ին Հալէպ կը գըտ-